ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի հուլիսի 8-ին

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 49. Քրեակատարողական հիմնարկներում քաղաքացիական զենք կամ հատուկ միջոցներ գործադրելը

1. Քրեակատարողական հիմնարկներում քաղաքացիական զենք կամ հատուկ միջոցներ կարող են գործադրվել հետևյալ դեպքերում.

1) քրեակատարողական ծառայողների կամ այլ անձանց վրա քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց հարձակումը հետ մղելիս.

2) քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի խմբակային խախտումների կամ զանգվածային անկարգությունների ժամանակ.

3) քրեակատարողական ծառայողների և կարգուկանոն հաստատելուն ներգրավված այլ անձանց օրինական պահանջներին չենթարկվելու դեպքում՝ քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց հակաօրինական գործողությունները կանխելիս.

4) պատանդներին, զավթված շենքերը, շինությունները, կառույցները և տրանսպորտային միջոցներն ազատելիս.

5) քրեակատարողական հիմնարկում պահվող անձի՝ շրջապատին վնաս հասցնելու փորձը կանխելիս.

6) սույն օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում որպես քաղաքացիական զենք կարող են կիրառվել կայծային պարպիչ, էլեկտրահարող սարք, ինչպես նաև գազային ատրճանակ:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում որպես հատուկ միջոցներ կարող են կիրառվել ռետինե մահակներ, ձեռնաշղթաներ և ոտնաշղթաներ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ, արգելքներ քանդող միջոցներ, ջրանետեր կամ զրահամեքենաներ, ծառայողական շներ, ինչպես նաև մարդու առողջությանը վնաս չպատճառող յուրաքանչյուր այլ միջոց:

4. Արգելվում է քաղաքացիական զենք կամ հատուկ միջոցներ գործադրել հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ ~~հաշմանդամների~~ հաշմանդամություն ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և քրեակատարողական ծառայողի կյանքին կամ առողջությանը սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

Հոդված 50. Քրեակատարողական հիմնարկներում մարտական կամ ծառայողական զենք գործադրելը

1. Քրեակատարողական հիմնարկներում մարտական կամ ծառայողական զենք գործադրվում է հետևյալ դեպքերում.

1) քրեակատարողական ծառայողների, քրեակատարողական հիմնարկում գտնվող անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող հարձակումները հետ մղելիս, ինչպես նաև զենքին տիրելու փորձերը խափանելիս.

2) քրեակատարողական հիմնարկների շենքերի, շինությունների, տրանսպորտային միջոցների վրա խմբակային կամ զինված հարձակումը խափանելիս.

3) զինված դիմադրություն ցույց տվող, ինչպես նաև քրեակատարողական ծառայողի կամ քրեակատարողական հիմնարկում գտնվող այլ անձի կյանքի և առողջության դեմ ուղղված ծանր հանցանք կատարող անձանց դեպքի վայրում ձերբակալելիս.

4) պատանդներին, զավթված շենքերը, շինությունները, կառույցները և տրանսպորտային միջոցներն ազատելիս.

5) քրեակատարողական ծառայողի՝ զենքը հանձնելու պահանջը կատարելուց հրաժարվող անձին ձերբակալելիս.

6) քրեակատարողական հիմնարկում պահվող անձին բռնի ուժով ազատելու փորձը կանխելիս.

7) զինված կամ տրանսպորտային միջոցի գործադրմամբ հարձակումը հետ մղելիս.

8) քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց կողմից քրեակատարողական ծառայողին զենքով կամ այնպիսի առարկաներով մոտենալիս, որոնցով հնարավոր է մարդու առողջությանը վնաս հասցնել՝ տվյալ ծառայողի նշած տարածության սահմանը խախտելու դեպքում.

9) քրեակատարողական հիմնարկներից կամ փոխադրման ընթացքում քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց փախուստի փորձը կանխելիս.

10) հրազեն գործադրելու մտադրության մասին նախազգուշացնելիս, տագնապի ազդանշան տալիս և օգնություն կանչելիս:

2. Արգելվում է զենք գործադրել հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ ~~հաշմանդամների~~ հաշմանդամություն ունեցող անձանց կամ անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և քրեակատարողական ծառայողի կյանքին կամ առողջությանը սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

3. Զենք գործադրելիս քրեակատարողական ծառայողները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները՝ այլ անձանց անվտանգությունն ապահովելու և տուժածներին բուժօգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

4. Քրեակատարողական ծառայողներն իրավունք ունեն բացելու և մարտական վիճակի բերելու զենքը, եթե գտնում են, որ ստեղծված իրավիճակում կարող են ծագել զենք գործադրելու՝ սույն հոդվածով նախատեսված հիմքեր: